


5301

железных 4.
Ригище
Горище

ЗКН19
г - 62/2

Ա. ԽԱՆՈՅԱՆ

ԲՈԳԻԱՆ
ԿՆՈՒՆՑԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

10 AUG 2005

ՅԿՊ/Գ

4-62 Խ

Պեղամարմին բայց յերկինքի, միացել

14 NOV 2009

Ա. ԽԱՆՈՅԱՆ

ԲՈԳԻԴԱՆ ԿՆՈՒՑՅԱՆ

Դատեցվել, ու գատավորներ,
իսկ մեղ ձեզ համ կը գատի հե-
ղափոխությունը;
(Կունյանի գատական ճառից)

Հայաստակուրյան «Զավելինիք»
ԹԻՖԵԼԻ, 1927

11 MAR 2014

5301

С. Ханоян

Богдан Кнуниан
Закнига



Թիֆլիս, տպարան «Զարյա Վ. Ա.
ստոկա»-ի, պատվեր № 698.
Գլամելիս № 333.
Տիքագիր № 1100.

24301-59



ԲՈՂ. ՔՈՅ. ԿԵՐԱԿՅԱՆ
1878—1911

ԲՈԳԴԱՆ ԿՆՈՒՆՅԱՆ

Բոլենիկյան հայ գալերեյայում, Անդրկովկասյան բանվորական-հեղափոխական շարժման մասնակցող գործիչների մեջ հատուկ և առանձին տեղ ե գրավում մի մարդ, վորի անունը թեև այսոր մոռացված ե, բայց և այնպես իր պատկառելի տեղն ունի մեր կուսակցության պատմության մեջ:

Այդ մարդը Բոգդան Կնունյանն ե, 900-ական թվականների սոցիալ-դեմոկրատական բոլենիկյան թեր ամենավառ դեմքերից մեկը վոչ միայն Սնդրկովկասի այլև համառուսական մասշտաբով:

Բոգդան Կնունյանը քաղաքական ասպարեզ յեկավ այնպիսի մի անհախանձ պահուն, յերբ վոչ միայն հայ իրականությունն եր նացիոնալիստական մթնոլորտով հղացած, այլև նախկին նարոգովոյցիները վերջին հուսահատ ճիշերն եյին արձակում իրենց կազմակերպված մահափորձերով: Իսկ ուստական գեղարվեստագետներն՝ ինչպես Մաքսիմ Գորկին, Զրապատի մուալլի տեսնելով, «քաջերի խելառության» եյին յերգեր ձնում...

Այդպիսի մի անհամբույր իրականության մեջ բազվի մտավորական ու բանվորական շըր-



ջաններում յերևան ե գալիս մի կարճահասակ, թխաղեմ յերիտասարդ, վորը մի կողմից պայքար ե մղում նորածին սոցիալիստ-հեղափոխականների դեռ ևս չկազմակերպված մտքի և մյուս կողմից դաշնակ-հնչակյան ազգայնական կեղևով պատաժ «թեորիաների» դեմ:

Բանվորական շարժման գարնանային պահն եր Անդրկովկասում, նա բացել իր դեռ ևս մատադ, բայց գորեղ ծիրերը, վորոնց սպառնում եր ցարական ցուրտ ու եակցիան իր դաժան ու մոայլ պոլիցիական հայացքներով ու ժանդարմական կրունկներով:

Դաշնակցությունը իր հերթին, նոր միայն կազդուրվելով, կազմակերպչական ապակենորոնացման դեղատոմսը շրջանառության մեջ ձգելով, արդեն զգում եր բանվորական շարժման պրոցեսի ձայնը և, շփոթված ու տագնապալի, հավաքույթ-հավաքույթի յետելից եր կազմակերպում՝ բանվորներին ազգայնական շրջանակներում ողակելու, նրանց միտքն ու հոգին «ազգային շահներով» ապահովելու համար:

Մարքս, մարքսիզմ, դասակարգային կոփվ, աշխատանք ու կապիտալ, հավելյալ արժեք—միանգամայն նոր խոսքեր ու մտքեր եյին Բագվի նավթաշխարհում ու գործարաններում։ Զանգեզուրի ու Ղարաբաղի բանվորների համար, բանվորներ, վորոնք տարիների ընթացքում շարունակ լսել եյին միայն թուրք, կոտորած, հայդուկ, Անդրանիկ, ազատ Հայաստան զանգան դասավորությամբ ու յերգել «թող կործանվու

Տաճկաստան» խոսքերը՝ հայսնի «Մեր հայրենիք» վոտանավորից, նոր բովանդակությամբ արտասանած ճառերը միանգամայն ոտար եյին ու խորթ։

Ու հանկարծ այդ հավաքույթներին Քրիստափոր Միքայելյանի, Ավետիք Ահարոնյանի դեմ «համարձակվում եւ դուրս գալ մի ինչ-վոր ջահել ուսանող ու գիտնականի շեշտով, հեղափոխականի համոզված տոնով սկսում ե ջրել այդ ազգային «հեղափոխականների» ասածք, ցույց տալիս նրանց թե մտքի ու թե խոսքի տկարությունը։

— Վոչ թե աղգ, այլ դասակարդ, վոչ թե թուրք, այլ ցարիզմ, — ահա բանվորության թշնամիները, ահա նրա դասակարգային ազատազրության դահիճները։ Բանվորները միանալով կռվելու յեն կապիտալիզմի դեմ։ հայ, ոռւս, թուրք և վրացի պրոլետարիատի դասակարգային թբշնամիներն են թե ոռւս, թե գերմանացի, թե թուրք ե թե հայ կապիտալիստները։ Հայ բանվորին նույնքան թշնամի յե հայ բուրժուան, վորքան և թուրք ու ոռւս բանվորին։ Բանվորության դրոշակին գրվելու յեն «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» մեծ ուսուցիչ Մարքսի մարտական խոսքերը։

Ահա թե ինչ նոր խոսքեր եր լսում գանգեցուցին, ահա թե ինչ մտքեր եյին հայտնվումնրան։

Վորքան ոտարուի, վորքան նոր, բայց և վորքան իրական ու գործնական։

Ու այս իրական ու գործնական, այսորվատեսակետից միանգամայն «պրիմիտիվ» սկզբունքները հանդիպում եյին դաշնակցական մեծ ու

փոքր իդեոլոգների կողմից խորին ատելության, մահացութչամության:

Ավետիս Ահարոնյանը, Քրիստափոր Միքայելյանը, մեկը ավելի վերամբարձ զոճով, մյուսը պետի խայլող խոսքերով «ապացուցում եյին», վոր հայ բանվորի միտքը զբաղվելու յե վոչ թե «հավելյալ արժեքի» մտքով, այլ «հավելյալ արյան» պրոբեմով։ Պետք են նախեն ամենից առաջ ազատազրել մեր թյուրքահայ յեղայրներին և ապա խոսել ինչ-վոր յեվրոպական «գոկտրինների», անմիտ զասակարգային կովի մասին, — հակածառում եյին դասակարգացին կովի մասին, նաև ական առաջարկան առաջարկան Ավետիսն ու Քրիստափորը...

Բայց պատմական հարվածը հանձին բանվորական շարժման ու նրա հայ ներկայացուցիչ Բոգդանի արդեն տրված եր Դաշնակցությանը Բագվում։ Դաշնակցությունը, գաղաղած, վոչ մի միջոցի առաջ կանգ չեր առնում հայ բանվորներին հեռու պահելու «գավաճաններից», «վտանգավոր քարոզներից» մթնոլորտից։

Ժամանակը հինը չեր։ 90-ական թվականներին յեթե տարիները որերի նման եյին անցնում, աննկատ ու «անհետք», ապա 900-ական թվականների որերը ամիսներ եյին, ամիսները տարիներ։ Յերկար մղձավանջից հետո մեջքն ուղղում եր վոչ միայն բանվորությունը, այլ և ինտելիգենցիան։

Ուսանողական շարժումները մի տեսակ քաղաքական ող մաքրող յերեռյթներ եյին,

Յարական կառավարության գործ դրած ամեն մի ձնշում հեղափոխական արձագանք եր գրանում բանվորական և ուսանողական միջավայրերում։

900-ական թվականների մայիսյան ցույցերը հեղափոխական գարնան առաջին ծիծեռնակների ճռվոյտն եյին, վորոնք ավետում եյին մի նոր առավոտ — արևելոս, պայծառ։ Նախկին ձնշվաճռությունը չեր նկատվում։ Ամեն տեղ, մասնավանդ բանվորական թաղերում ու գործարաններում, տեղի ուներ մի յեռուն ու հուզումնալի կյանք։

Ուսասատանը իր գործադուներով ու բանվորական ցույցերով արձագանք եր գտնում Անդրկովկասում։ Բաթում, Թիֆլիս, Բագու քաղաքներն արդեն հեղափոխության սեղանին դրել եյին իրենց քաղաքական գոհերը անխտիր բոլոր ազգություններից։

Ահարոնյաններն ու Քրիստափոր Միքայելյանները չեյին կարող մի նոր չեսու հանդիսանալ ու գտնակարգային կովի արևին ասել «կանգնիր»։

Ու շարժումը աճում եր։

Դաշնակցականները, հնչակյանները մի կողմից, դաշնակցականներից անջատված ինտելիգենտների մի ուրիշ խմբակ մյուս կողմից, իբր թե միայն «կազմակերպչորեն» հեռու արդեն ձևավորված Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ կուսակցությունից, բայց միշտ Փրազեղոզիայով զասակարգային, եյությամբ ազգայնական, այսպես կոչ-

ված «սպեցիֆիկները» քիչ խոշընդուռ չելին հանդիսանում հայ բանվորների գիտակցությունը մթագնելու գործում:

Ուսասատանի սոցիալ-դեմոկրատիայի մեջ գործող սակավաթիվ հայ ընկերները, մասնավորապես Բոգդան Կնունյանը, ահազին ջանքեր եյին գործադրում միննույն ֆրոնտի վրա աշխատող, բայց մեր գործին խանգարող ամեն տեսակի ու տիպի «գուսակցությունների» ու կազմակերպությունների դեմ կովելու:

Բոգդան Կնունյանը ազգայնականների դեմ կովողների առաջին շարքերումն եր ու կովող դեկավարներից ամենափայլուն դեմքը:

Ո՞վ եր Բոգդանը, վմրտեղից, ինչ միջավայրից եր ասպարեզ յեկել նա իր «նոր» խոսքը Բագվի հայ բանվորությանն ասելու, գաշնակցական և այլ ազգայնականների դեմ կովելու հանդուզն ձեռնարկությամբ:

Մեր հակառակորդները, մի ժամանակ անզոր լինելով մեր դեմ կովելու, սոցիալ-դեմոկրատներին նախ հայտարարում եյին «ազգի ժավաճաններ», իսկ հետո, յերբ այդ զենքը ժանգուտից, իրենց տիրացուական ամբիոններից, մամուլի եջերից մեզ հոչակում եյին «բրոցուային սոցիալիստներ»:

Այդ զենքերով Բոգդանի դեմ կովելը վըժվար եր, քանի վոր նա վոչ միայն «բրոցուարային» չեր, այլ կարող եր պատկառելի ուսուցիչ հանդիսանալ թթամիտ զաշնակցական լիդերների համար, յեթե միայն նրանք ընդունակ

լինելին ըմբռնելու դասակարգային կովի եյությունը, յեթե հասկանային նրա պատմական անհրաժեշտության իմաստը:

Շուշեցի յեր Բոգդանը, ուալական դպրոցի շրջանավարտներից, վոր չքավորության պատճառով, չնայած դասընթացքի վաղ բոլորելուն, յերեք տարի կրթության միջոց ձեռք բերելու նպատակով այս ու այն կողմ գնալով, համենայն դեպս 1896 թվին կարողանում ե մտնել այն ժամանակվա Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը:

Ուսանողական մտքերի խմբման, հասարակական բուռն կյանքի մի պահ եր, յերբ յեռանդու ու կրակոտ Բոգդանն ընկնում ե Պետերբուրգ: Հասարակական ու քաղաքական շարժմանը հարազատ, այդ շարժումը իր տարերքը համարող Բոգդանն ընկնում ե պայքարի հորձանուտները, նրա բուռն հոսանքն ու կենորունական դեմքերից մեկը հանդիսանում: Պայքար, կոիվ և մտակոր պաշար,—ահա այդ ժամանակվա ուսանողական ձգտումը:

Նարոդովոլցիների ու մարքսիստների սկըզբունքային բանակովի ամենատաք ժամանակն եր, յերբ հակառակորդ բանակներից արտասահմած կամ զրավոր ամեն մի խոսք կլանվում եր աղահարար, Պայքարը զենք եր պահանջում ու կովող կողմերը զինվում եյին իրենց հարազատ զենքերով — սկզբունքային հիմնավորումներով՝ ընթերցանությամբ:

Հակվելով դեպի մարքսիզմը, ուսանողական բուռն տարիներում հանդիսանալով շարժման դեկավարներից մեկը, Բոգդանը 1901 թվին ձերբակալվում է ու աքսորվում Բագու:

Հետաքրիր տարիներ եյին ու բնորոշ ցարական քաղաքականության տեսակեալից: Ինչպես հայտնի յե, 1900 թվի վերջերին ուսանողներին զսպելու համար «բարձրագույնս» արձակվում է մի հրաման, վոր բոլոր ուսանողները գնալու յեն զինվոր: Յեվ ուսանողական շարժումը թուլանալու փոխարեն ավելի ուժեղանում է: Սկսվում են բողոքի ցույցեր, ինչպես որինակ Պետերբուրգի կազմակայա պլոշչադի հայտնի ցույցը, ուր ուսանողությունը ճառերով ցուցադրում եր իր դժգոհությունը նիկոլայ վերջինին: Այդ ցույցին մասնակցելու համար ե, վոր Բոգդանը աքսորվում է «հայրենիք»—Բագու:

Յեվ այդ ժամանակից, իբր աշխարհայացքով ձևավորված մարքսիստ, ասպարեզ ե զալիս ազգային իմաստունների—Սնարոնյանների, Քրիստափորների դեմ իբր «բրոյցուրային սոցիալիստ»:

Բագուն արգեն գառնում եր նրա համար իր տեսական սկզբունքները գործնականում ոգտագործելու մի վայր: Բանվորությանը իր հարազատը համարելով, նրա դասակարգային շահերին նվիրվելով, Բոգդանը իրեն հատուկ մոռացության աստիճանի հասցրած յեռանգով սկըսում է կազմակերպել նրան:

Քարոզում ե ու խմբեր կազմում: Խտացնում ե ցարի ու կապիտալի դեմ պայքարող բանվորների շարքերը, միաժամանակ, ինչպես ասացինք, կովելով բանվորությանն ոտար տարրերի դեմ:

1902 թվականը Բոգդանի համար քաղաքական գործունեցության տարի յեր: Այդ թվականին եր, վոր մի շարք ընկերների հետ, ինչպիսիք են՝ Թիֆլիսի բանտի անմիտ զինվորի զնդակի դոհ հայտնի Լազոն Կեցիսվելին, Ավել Ցենուկիձեն, Կրամինը, Վանո Մատուրուան և ուրիշները, — արդեն կազմակերպված Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Կուսակցության Բագվի կոմիտեյի մեջ աշխատելով՝ բանվորական լայն մասսաների հետ և կապվում: Այդ թվականին ե, վոր Բագվի պրոլետարիատը, մայիսյան ցույցերին կարմիր դրոշականերով դուրս գալով փողոց, պահանջում է «ութ ժամյա բանվորական որ», «գեմուկրատական հանրապետություն» և այլն: Մայիսյան ցույցը, վորին մասնակցում եր 5 հազարից ավելի բանվորություն, առաջին պրոլետարական հանդեսն եր ու հեղափոխական ակտը ընդդեմ ցարիզմի ու կապիտալիզմի: Այդ ցույցի կազմակերպողներից մեկը Բոգդան Կունյանն եր:

Բանվորական շարժումն Անդրկովկասում ունեցել ե նույն զարգացման ընթացքը, ինչ վոր ամբողջ Ռուսաստանում: Յեվ Անդրկովկասի հեղափոխական պրոլետարիատի կազմակերպման մեջ Բոգդան Կունյանը ունի խոշոր թե նախաձեռնություն և թե աջակցություն: Մի կողմից Վրաստանի սոցիալ-դեմոկրատները Թիֆլիս, Քու-

թայիս քաղաքներից հետզհետե ցանցում են ու կազմակերպություններ առաջնում այլ և այլ քաղաքներում ու նույն իսկ գյուղերում, մանավանդ Գուրիայում, իսկ մյուս կողմից Բագվի սոցիալ-դեմոկրատները — իրենց շրջակա վայրերում։ Կյանքը ստիպում եր Վրաստանի՝ հատկապես Թիֆլիսի, ինչպես և Բագվի ընկերներին միանալ, մի ընդհանուր անդրկովկասյան կազմակերպություն առաջացնել — անդրկովկասյան բանվորական քաղաքական շարժումը դեկավարելու, նրանց մի կուսակցության մեջ հավաքելու նպատակով։

Յեկայդ միացման մեջ քիչ գեր չե խաղում Բողդան Կունչյանը։ Մանրամասնությունների մեջ չմտնելով, ասելու յենք, վոր անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատական շրջանի սկզբնական պերիոդում Բողդանը մի շատ սակավ խումբ ընկերների հետ հանդիսանում ե ամենագործոն գեմքերից մեկը։

Յեկայնչգեռ հայ իրականության մեջ գործող ազգայնական կուսակցությունները, այսպես կոչված «ազգային սոցիալ-դեմոկրատները» — «սպեցիֆիկները» վերը կազմակերպչորեն, վերը սկզբունքորեն մեկուսանում ելին հանուր բանվորական շարժումից, Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության կողմնակիցներն ու անդամները՝ «Անդրկովկասի Միության կոմիտե» անվան տակ հավաքում են իսկուկան հեղափոխականներին և 1903 թվի սկզբներին դնում պրոլետարական միջազգային

շարժման սկիզբը, չեզոքացնելով ազգային մեկուսացումը, «սպեցիֆիկների» սիրած ու աշուղիյերդ դարձրած «հայկական» սպեցիֆիկ պայմանները։ Այդ միացման արդյունք ե համոդիսանում հայերեն գաղտնի հրատարակվող «Պրոլետարիատ» *) ու նույնանման պայմաններում լույս տեսնող վրացերեն «Բրձոլա» (Կոփվ) թերթերի միացումը։ «Պրոլետարիատի Կոփվ» **) անունով հրատարակվող վրացերեն, հայերեն ու ռուսերեն թերթը բանվորական միջազգային շարժման թե՛ փաստն եր ու թե զեկավարը։

Այդ միացման մանրամասնությունների հետ ծանոթանալ ցանկացողներին մենք ցույց կտանք ընկ. Ա. Խումարյանի՝ հանգուցյալ Արշակ Զուրաբյանի մասին գրած հիշողությունները «Մարտակոչ»-ի 1924 թվի հունվարի 4-ի համարում։ Խումարյանը Արշակ Զուրաբյանի ու Բողդան Կունչյանի հետ յեղել ե այդ պատմական ու բանվորական շարժման աջողության ժեսակետից նշանակալից միացման նախաձեռնողներից մեկը։

«Պրոլետարիատի Կոփվ» թերթի մասին է միջի այլոց ասելու յենք, վոր դա անվեգալ որգանն ե յեղել, միակ մարքսիստական թերթը, վորի շնորհիվ թե հայ, թե ռուս և թե վրացի բանվորները ծանոթացել են մարքսիզմի հիմնական սկզբունքի հետ։ 1903 թվին գումարվում ե կուսակցության յերկրորդ համագումարը, վորը

«Պրոլետարիատի» առաջին համարը լույս տեսավ 1902 թվի աշնանը՝ անլեզակ տպագրությամբ։

*) «Պր. Կոփվը» լույս տեսավ 1903-ի սկզբներին։

ճակատագրական դեր ե կատարում Ռուսաստանի բանվորական շարժման ըսնելիք ուղղության մեջ, և այդ համագումարին Անդրկովկասից գըտնը վատագով պատգամավորների շարքում թոփուրիձեցի, Արշակ Զուրաբյանի հետ լինում ե նաև Բոգդան Կոսունյանը, վորը կուսակցության պառակտումի միջոցին անցնում ե Լենինի ու իր համախոհների կողմը, Ստեփան Շահումյանի հետ միասին:

Կուսակցական յերկրորդ համագումարից հետո սկսվում ե նրա ամենաբռնուն հեղափոխական կյանքը Ռուսաստանում և թե արտասահման:

1904 թվին, իր հերթական այցը անելով Անդրկովկաս, Բոգդանը Բագվից գալիս ե Թիֆլիս: Թիֆլիսի ընկերները, ցանկանալով ոգտվել նրա ներկայությունից, հավաքվում են խորհրդակցության՝ իրենց զիրքը պաշտոնավես բանաձևով ձևակերպելու:

Այդ խորհրդակցությունը տեղի յե ունենում Արշակ Զուրաբյանի տանը 1904 թվի հունվարի 5-ին, «Թաթախման» գիշերը: Հետաքրքիր ե այդ խորհրդակցության միջոցին պատահած դեպքը, վորի ականատես ընկ. Նինա Ալաջալյանը պատմում ե իր՝ Արշակ Զուրաբյանին նվիրած «Հուշեր անցյալից» վերնագրով հոգվածում:

«Ամբողջ որը, հունվարի 5-ին, մենք պատրաստության մեջ ենքնք. սեղանը ստացվեց տոնական...»

«Վերջապես, հենց վոր մթնեց, սկսեցին գալ «Հյուրերը»: Ժամը 7-ին մոտ Միության կոմիտե-

յի բոլոր անդամները ներկա եյին. «Թաթախմավերուց» և Շոպենի նախերգանքը նվազելուց հետո (ինձ համոզեցին նվազել) գիմնցինք աշխատանքի...

«Մոտավորապես դիշերվա 11-ին, տաք խոսակցության ժամանակ, հանկարծ Արշակը տեղից վեր թռավ և շնչարով «կամաց, ընկերներ», դուրս գնաց պատշգամբ:

24301 «Մինույն ըոպեյին նա, վերադառնով սենյակ «ժանդարմներ են» խոսքերով, նետվեց դեպի սեղանը, հավաքեց նրա վրայի բոլոր թղթերը և վագեց կնոջ սենյակը, ուր գնացի և յես, դուրս քաշելով բարձի տակից անեղաւ զրականության կապոցը:

«Ասես միաժամանակ պայմանավորված, մենք ինչ վոր ունեյինք՝ նետեցինք Արշակի կնոջ վերմակի տակ: Հենց՝ այդ բոպեյին գոներում յերևաց ժանդարմական ոփիցերը: Արշակը շրփոթեց և խորեց ժանդարմական ոփիցերին ի նկատի ունենալով կնոջ ծանր հիվանդությունը, խուզարկություն չկատարել նրա սենյակում: Ժանդարմական ոփիցերը հարգեց Արշակի խնդիրը, պայմանով վորպեսզի այդ սենյակը վոչ վոք չմտնի: Այդպիսով բոլոր կարևոր թղթերը աղատվեցին:

«Սկսեցին պարզել ներկաների ով ինելու: Բոլորը հայտնեցին, թե իրենք Արշակի հյուրերն են և հավաքվել են թաթախմելու, ուստի և խրնդրեցին իրենց թույլ տալու համար: Վորը իհարկե մերժվեց: Արշակը ամեն



* ZGUR-ADM.CCP *

Հ. Ա. ԽՈՎՈՅԱՆ

մեկին առանձին. վոչ վոքի մոտ վոչինչ վարելարեկող բան չգտան և, տարորինակ ե, բոլոր ներկա յեղողներին՝ բացի կնունյանից, բաց թողին:

«Այստեղ չի կարելի չհիշել մի կուրյոզ. համենայն դեպս բոլորի հասցեները վերցրին (պարզ ե, վոր բոլորի հայտնած հասցեները մտացածին եյին): Ի՞նչպես հետո պարզվեց, ոֆիցերի այդ միամտությունը նրա անփորձության հետեւանքն եր (ասում եյին, թե նրա առաջին դերյուտն եր դա), վորի համար նա խստագույնու առուժեց և իբրև պատիժ նրան փոխադրեցին Որենբուրգի նահանգը»:

«Կնունյանին պահեցին նրա համար, վոր նա խուզարկության ժամանակ պատռել եր մի ինչ-վոր թուղթ: Բայց այդ ել անինաս անցավ: Ազգու տոնով ինչ-վոր հեղինակավոր մարդու անուն տալով, վորի մոտ իբր թե ապրում ե ինքը, կնունյանին աջողվեց հիմարացնել ժանդարմին և նա նույնպես ազատ արձակվեց»:

Այդ „միջադեպից“ հետո Բոգդանը նախ մեկնում ե Ռուսաստան և ապա արտասահման, ի հարկե կուսակցության գործերով:

1904 թվին մատնակցում ե Ամստրեդամի միջադպային սոցիալիստական համագումարին, վորից հետո վերադառնում ե Ռուսաստան, ձերբակալվում ե ու չորս տարով աքսորվում Միբիր: Բայց կարողանում ե փախչել արտասահման, ուր առժամանակ մնալուց հետո վերադառնում ե Ռուսաստան և հեղափոխության կենդանի գործին նվիրվում: Նորից ձերբակալվում

է ու նորից դատի յենթարկվում 1905 թվի մարտի 30-ին:

Այդ դատը խոշոր քաղաքական նշանակություն ունեցավ այն տեսակետից, վոր նա ցարական դատարանում մեղադրյալի դերից իր ճառով անցնում ե մեղադրողի խիզախ կոչման:

Նարոգնայա Վոլյայի գործադիր կոմիտեյի անդամների՝ Ժելյաբովի, Պերովսկայայի և մյուս ների դատից հետո յերկար տարիներ ցարական դատարանի դահլիճում չեղ լսվել այդպիսի ճառ:

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության կենտրոնական կոմիտեն այդ ճառը տպեց առանձին գրքույկով ու բազմահազար որինակներով տարածեց բանվորական շրջաններում «Դատ դատի գեմ» վերնագրով:

Ընկ. Կնունյանը դատապարտվում ե չորս ամսով կալանքի ամրոցում:

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության այդ վարչուն ու կրակոտ անգամը, հեղափոխականը շատ հեշտությամբ եր պրճնում ցարական ժանդարմերիայի ձեռքից:

Բանտից այս անգամ ևս ազատ ե արձակվում և գնում արտասահման, կրկին Ռուսաստան գալու նպատակով:

Յեկյեկավ:

1905 թվի ամառը նա դալիս ե Ռուսաստան և ապա Անդրկովկաս՝ Բագու և Թիֆլիս:

Նրա գալով Անդրկովկասի բանվորական շարժման, կուսակցական կյանքի մեջ մի տեսակ կենդանություն ենկատվում:

Հիշում եմ նրան Թիֆլիսում, նոր, չգիտեմ ում նվիրած յեվրոպական հագուստով, ջենալմենի նման, մեր տան ներքնահարկում, ուր խմբագրվում եր «Պրոլետարի Կովկ» թերթը և Միխա Յանձակայան, Սոսոն (Ստալինը), Կամեներ, Սաշա Շուլուկիձեն և Բոգդանը հանաքով ու սրախոսություններով թե հոգվածներ եյին զրում ու թե բանվորներին կազմակերպելու մասին ծրագրներ կազմում:

Այդ այն ժամանակն եր, յերբ կուսակցության տարածայնությունները հասել եյին իրենց գագաթնակետին և մեկը մյուսի յետեից լույս եյին տեսնում բրոցյուրներ Պլեխանովի, Մարտովի և մյուս փոքրամասնականների դեմ: Այդ բրոցյուրները բազմացնելով տարածում եյին Անդրկովկասի քաղաքներում և նրանցից մի քանիսը թարգմանում վրացերեն ու հայերեն:

Գրական, կազմակերպչական բուռն մի շրջան եր այդ: Թեև կարճ միջոց, բայց և այնպես աշխույժ գործունեյություն ուներ Բոգդան Կուտնյանը այդ միջոցին:

Ինչպես հայտնի յե, 1905 թվի հունվարի 9-ը մի տեսակ նախերգանք հանդիսացավ Ռուսաստանի առաջին մեծ հեղափոխության համար, հեղափոխություն, վորի բուրմունքը ամիսներ առաջ զգացել եր նույն իսկ «Նովոյե Վրեմյայի» վհուկ խմբագիր Սուվորինը իր հայտնի «Իշխա-

նությունը ժողովրդին մոտեցնելու եպօխա» հոդվածով: Միավետական ուժիմը արհեստական «գարուն» եր բերում բռնակալական ցրտաշունչ որերին: 1905 թիվը Ռուսաստանի հեղափոխության այն տարին եր, վոր սկսվեց, ինչպես ասացինք, «արյունոտ կիրակիով»: Նիկոլայ վերջինի Զմեռային պալատի առաջ հրապարակը ներկվել եր քահանա Գապոնի ղեկավարությամբ ու նրա առաջնորդությամբ զնացող դեռ ևս միամիտ բանվորության անմեղ արյունով: Այդ որվանից բանվորական հեղափոխությունը դըքվեց Ռուսաստանի քաղաքա-հասարակական կյանքի որակարգի հարցերում:

Յեթե հետագա մոայլ ռեակցիան մի քանի տարիներից հետո, 1912 թվականից սկսած՝ բանվորական շարժման գանգահար հանդիսացավ կենայի հրացանազարկի յենթարկված բանվորությանը, ապա 1905 թվի հեղափոխությանը խոշորապես նպաստեց հունվարի 9-ին դավաճանորին ու նենգությամբ աշխատավորներին հրացանի բռնելու փաստը:

Հասարակական մեռած կարծիքը, վոր միայն արտահայտվում եր բուրժուական լիբերալ սալոններում, կարծես կյանք ստացավ մամուլի եջերում: Ակավեց մի հախուռն կյանք, բողոքող, դժգոհ գործադուների մի հսկայական շարան:

Բանվորության 1903 թվականի հուլիսյան և այնուհետև կրկնվող 1904 թվի համառուսական բնույթ ու ծավալ ստացող գործադուները

բոնակալ միապետությանը ցույց տվին իրենց ույժը: 1905 թվին արդեն, դեռ ևս անդիտակ մնացած մասսաները համակվեցին իրենց գիտակից ընկերների տրամադրությամբ և հասկացան, վոր իրենց ղեկավար կարող են լինել վոչ թե Զուբատովք*) ու Գապոնը, այլ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունը ցարիզմի դեմ գրոհ տալու, բոնակալ միապետությունը տապալելու գործում:

Յեթե լիբերալ մանր բուրժուական խավերը բողոքի թափ ցույց տվին, ապա Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունը ամենաեռուն հեղափոխական աշխատանք եր տանում բանվորական կենտրոններում:

Բողոքանը, վոր ապրում եր Ռուսաստանի այն որերի սրտում — Պետերբուրգ, ամենաակտիվ

*) Զուբատովք Մոսկվայի պահնորդական բաժնի վարիչն եր: Նա Պետրի արովկացիոն ջաղաքականության ջանակը իրադրուղն եր: Ի՞նչ ուղղության մեջ առողջ բանվորական, պրոետարական շարժումը տանել բարձր խավերին ցանկված հունով, թե կուզ հենց բանվորների մեջ պրոֆեսիոնալ-տնտեսական կազմակերպություններ առաջացնել ժանդարմական որդանների ղեկավարությամբ առաջնորդելու Հուբատովքի ղեկավարությամբ 1902 թվին կազմակերպվեց „Մեխանիկական արհեստանոցների փոխարար ունության ընկերությունը“: Ըստ երրորդ կանոնած այնպիսի բանվորներ, վորոնք միաժամանակ պահնորդական բաժնի գործականել ելին: Ըստ երրորդ կազմակերպվեց առաջնորդությունը յեռանդուն գործունեյություն սկսեց, մի քանի գործադուլ կազմակերպեց: Այդ գործադուներից ազմուկ հանեց Դուժանի գործարանի գործուրք, վոր հետևանքն այն յեղափ, վոր ավելի խորացավ բուրժուազիայի եմ մղվող պայքարը: Զուբատովքին բառը դարձավ մի արգահաւելի անուն, վոստիկանական պրովիվատունների քաղաքական շարժումը այլասերող մի գործունեյություն: (Ն. Լինին, հատոր V, յերես 567 — «Մանոթություններ» բաժնից):

մասնակցություն եր ցույց տալիս բանվորական շարժմանը:

Խորամանկ Վիտտեն, այն ժամանակվա մինիստրության նախագահը, իր յերկդիմի՝ կիսալիբերալ կիսաբռնակալական քաղաքականությամբ յուղ ե ավելացնում սկսվող հրդեհի դեռ ևս փոքրիկ բոցերի վրա, և գործադուլային հեղափոխական հրդեհը բռնկվում ե: Հրդեհի առաջն առնելու նպատակով Վիտտեյի թելադրանոք Նիկոլայ վերջինը արձակում ե իր հոկտեմբերի 17-ի մանիթեստը ժողովրդին «նվիրած» «ազատությունների» մասին:

Բանվորական Պատգամավորների Խորհուրդը տարերային շարժումով դեռ մինչև հոկտեմբերյան մանիթեստը կազմակերպվել եր և արդեն քաղաքական հեղինակություն ձեռք բերել թե բանվորական, թե լիբերալ ու արմատական ինտելիգենցիայի շրջաններում: Նա այնքան եր ուժեղացել, վոր առանց տատանումների քաղաքական-գործնական քայլեր եր անում: Այդ քաղաքական և հեղափոխական քայլերը թե ագիտացիոն նշանակություն ունեցին ու թե գործնականորեն վճռում եյին կենսական հարցեր: Խորհրդի ազդեցության տակ եր, վոր հոչակավոր Տրեպովը հոկտեմբերի 14-ին հրատարակած հրամանով գրում եր՝ «Փամփուշտներ չխնայեք», իսկ մյուս որը, հեղափոխական թափին չդիմանալով, ընդունում ե, վոր «Ժողովրդի մեջ հասունացել ե հավաքույթների պահանջը»: Այդքան հրաշագործ եր հեղափոխությունը և նրա ազգե-

ցությունը նույն իսկ բռնակալական, հաստածակատ գործակալների համար: Հեղափոխության մի որը տարիների ազդեցություն եր գործում վոչ միայն մասսաներ դաստիարակելու գործում, այլև բռնակարության հիմքերը տապալելիս, արմատախիլ անելիս:

Յեվ հեղափոխության թափը, նրա ասպարեզ հանած աշխատավորական մասսաների ներկայացուցիչներին արդեն ստիպում է խոսել հեղափոխական իրավունքի լեզվով: Նրա թելադրանոք:

1905 թվի հեղափոխությունը, ինչպես և ցարական կառավարության տապալումը յենթադրել եր տալիս «գեմոկրատական հանրապետություն», այլ կերպ ասած՝ թե հիմնադիր ժողովը և թե քաղաքական մյուս պահանջները վերջիվերջո հանդում ելին «գեմոկրատական հանրապետության». ասել ե՛ 1905 թվի հեղափոխությունը գնում եր բուրժուական հեղաշրջման նշանաբանների տակ:

Ահա թե ինչու Բոդգան Կնունյանը, վորը Բանվորական Խորհրդի անդամ եր, Պետերբուրգի քաղաքային դումային ներկայացող պատգավորության մեջ լինելով, դումային դիմած իր ճառում առում ե.

«Մուսասատանում կատարվող հեղաշրջումը բուրժուական հեղաշրջում ե: Նա տեղի յե ունենալու հոգուա ունենոր դասակարգի, ուստի հենց ձեր սեփական շահերը պահանջում են, պարոններ, վորպեսդի նա շուտ կատարվի: Յեթե

դուք ընդունակ եք վոքր ինչ հեռատես լինելու, յեթե դուք ընդունակ եք ձեր դասակարգային շահերը ըմբռնելու, ապա ամբողջ ուժով ոգնելու: յեք ժողովրդին՝ միապետությունը տապալելու: Մեզ հարկավոր չեն ձեր համակրական ռեզուլյուցիաները և մեր պահանջների պլատոնական պաշտպանությունը: Մենք պահանջում ենք, վոր դուք ձեր աջակցությունը ապացուցեք մի շաբք գործնական քայլերով:

«Ըստրությունների անձունի սիստեմի շընորհիվ, միլիոն ու կես ազգայնակություն ունեցող քաղաքի կարողությունը մի քանի հազար ունենորների ներկայացուցիչների ձեռքին ե: Բանվորական Պատգամավորների Խորհուրդը պահանջում ե (իսկ նա իրավունք ունի պահանջելու, բայց վոչ խնդրելու, վորովհետև մի քանի հարյուր հազար բանվորների ներկայացուցիչ ե) — քաղաքային ունեցվածքը տրամադրելի գարձնել բոլոր բնակիչներին իրենց պետքերի համար գործադրելու: Իսկ վորովհետև ներկայում հասարակական խնդիրը միապետության դեմ հղած կոփիմ ե, իսկ այդ կովի համար հարկավոր են ժողովատեղիներ՝ պահանջում ե բանալ մեր քաղաքային շենքերի դռները:

«Մեզ հարկավոր են միջոցներ գործադրուց շարունակելու — քաղաքային գումարները այդ նպատակին հատկացրեք և վոչ թե վոստիկաններին ու ժանդարմաներին: Ազատությունը պաշտպանելու համար մեզ հարկավոր են զենքեր

միջոցներ հատկացրեք պրոլետարական միլիցիա կազմակերպելուն»:

Այսպիսի խոսքերով եյին դիմում հեղափոխականները լիբերալներին և այդ խոսքերը հընչեցնող ամենաականավորներից մեկը Բոգդաններ, դեռ մինչև հոկտեմբերյան մանիֆեստի հրատարակվելու որը:

Հեղափոխությունը ստիպեց միապետությանը գնալ զիջումների ձամբով:

Հետևյալ որը, գեկտեմբերի 18-ին, Պետերբուրգի քաղաքացիները կարգում եյին ցարական մանիֆեստը, վորը մի յերկու ամիս անց փոխվեց թշուանոթների, հրացանների և կախաղանների: Փաած միապետությունը մանիֆեստով ուղեց լինել Նիկոլայի գահի առաջացած ճեղքերը, բայց չկարողացավ: Բանվորությունը պահանջում եր գահի վոչչացումն: Կոփիլը սկըսել եր կտաղի ու մոլեգին:

Ու մինչդեռ Վիտտեն իր քաղաքական խաղերով, գեափի լիբերալներն ուղղված ժպիտներով ուղում եր հրդեհը հանգչնել՝ «հասարակական կարծիքը մեղմել», բանվորությունը նրան չհավատալով՝ հեղափոխական կարգով ե իր սեփական իշխանությունը ծնում «Բանվորական Պատգամավորների Խորհուրդ» անունով:

Ստեղծվում ե մի արտաքո կարգի դրություն: Մի կողմից ցարական բոնակալությունը, վոր մանիֆեստով իր իշխանությունը դնում և սահմանադրական պետությունների կարգը, իհարկե հարկ տալով լիբերալ խափերին, մյուս կողմից

նրա հակոտնյա Բանվորական Խորհուրդը: Մեկը մյուսին ժխտող, մեկը մյուսին հակառակ այդ յերկու իշխանություններից պարզ ե, վոր պետք ե հաղթանակեր նա, ով ավելի ուժեղ եր, ով ավելի կազմակերպված:

Բանվորական Խորհուրդը, վորի անդամ եր ընտրված և Բոգդան Կոունյանը, բացի հեղափոխական գործից ուրիշ վոչինչ չեր կարող անել քանի վոր գործի համար հարկավոր եյին նյութական ամեն կարգի հնարավորություններ: «Խորհուրդը», իբրև մինոր ու աննախընթաց հեղափոխական կառավարություն, կարող եր իր գոյությունը պահպանել ու կովել միապետության գեմ, յեթե ունենար այն բոլորը, ինչ վոր հարգեամ, իշխանությանը—զինված ույժ: Կավոր եր պետականությանը—զինված ույժ: Այդ ույժը նա չուներ: Բայց և այնպես գործում եր:

Բոգդան Կոունյանը ամենաակտիվ մասնակցություն ուներ Բանվորական Պատգամավորների առաջին Խորհրդում և Խորհրդի անունից մի շաբք թոռուցիկներ եր զբել:

Նոյեմբերի 19-ին մանիֆեստի լուրն առնող բանվորները Պետերբուրգի զանազան ծայրերից դեպի Ռոժդեստվենսկի կուրսերի շենքն են գալիս ցույցով և քաղաքական բանտարկյաներին ազատելու պահանջով:


Պատգամավորների Խորհուրդն ընտրում ե յերեք հրամանատարներ—Գ. Խրուստալյովին, Լ. Դ. Տրոցկուն և Բ. Կոունյանին, լիազորելով նրանց բանվորական ցույցը ղեկավարելու:

Ժողովը, լսելով ճառախոսների գեկուցումները քաղաքական արդի դրության մասին, միաժամանակ պահանջում է Դումայի պատգամափորների թիվը լրացնել բանվորների և ինտելիգենցիայի ներկայացուցիչներով։ Այսուհետեւ, հոկտեմբերի 19-ի և 20-ի նիստերից հետո, Բանվորական Խորհուրդը մի թուղթիկ է բաց թողնում «Ճարական մանիֆեստ» ու մեր պահանջները» վերնագրով, վորը նույնպես պարտավորեցնում էն գրել Բողդան Կնունյանին։ Այս հոգված-թուղթիկում, բացի մնացած կետերից, Բողդան Կրնունյանը անում է մի հետաքրքիր քայլ. — դիմելով պրոֆմիություններին, առաջարկում է միանալ Ռ.Ս.Դ.Բ. կուսակցության, այսինքն միանալ բոլշևիկյան տեսակետին՝ կուսակցական պրոֆմիություններ կազմակերպելու անհրաժեշտության խնդրում։

Նույն թվի նոյեմբերի մեկին Պատգամափորների Խորհրդի նիստին Լեհաստանի պատգամափորների վողջույն-ճառին Խորհրդի գործադիր կոմիտեյի անունից պատասխանում է դարձյալ Բողդան Կնունյանը, վոր արծարծում է բոլշևիկյան տեսակետաները ազգային հարցի մասին։

Ամբողջ Ռուսաստանը զառնում է մի յեռացող կաթսա և Վիտտեյի տված մանիֆեստը վոչ թե «խաղաղաբարը», այլ բորբոքող ու հեղափոխական ակտիվություն ծնող բնույթ է ստանում։

Յարական թղթի կտորը չեր կարող բավարքել իրավագուրկ բանվորներին և ճորտակա-



Բողդան Կնունյանը

Գետերը բանառում 1905 թվի վերջերը

նություն ապրող գյուղացիությանը. ուստի բնական պիտի համարել թե ինչու ժողովրդական մասսաները վոտքի յելան ցարական կառավարությունը տապալելու:

Յարի կառավարությունը տեսավ իր լիբերալ քայլի արդյունքը և սոսկաց: Խոստումը սարսափի փոխվելով լիբերալ վիտուելիզմից անցավ հին պայտական Դուրսովոյի քաղաքականության և ոռոսական գարունը փոխվեց ցրտաշռունչ ձմռան:

Մուկվայի դեկտեմբերյան ապստամբությունը Պրեմիայում ել ավելի սարսափի յենթարկելով ցարական կառավարությանը՝ ստիպեց նրան Խորհուրդը ցրելու, ինչպես ասացինք՝ դիմել յերկաթի թաթմանների, հալածանքի քաղաքականության:

Խորհուրդը ձերբակալվեց, նրա մեջն ել Բոգդան Կնունյանը: 1906 թվին տեղի ունեցած ձեական դատը մշտական աքսորի դատապարտեց Խորհրդի անդամներին և քշեց Սիբիր:

Բոգդանը ի թիվս այլ ընկերների «մեկնելով» Սիբիր, ինչպես և Տրոցլին ու մյուսները յերկար չեն մնում աքսորում, ընդամենը յերեք ամիս. փախչում են ու դնում արտասահման: 1907 թվականից մենք նրան տեսնում ենք Բագու:

Աքսորից փախած, ոեակցիայի մոայլ ուժերի ծանրության ներքո, Բոգդանը Բագու յեղալիս մի այնպիսի ժամանակ, յերբ հեղափոխու

թյան փոթորիկն արդեն մարել եր ու մեշշանականությունը տիրապետող հանդիսացել:

1907 - 8 - 9 թվականները հեղափոխության տեղատվության տարիներն եյին:

Ցարական մարակի, կախաղանների ուրվականները սարսափի եյին յենթարկել բազմաթիվ հեղափոխականների:

Գրական սանինի զմը, «աստվածորոնումը» դարձել եր մաքերի վորոճման նյութ և կարմիր 1905 թվին հաջորդել եյին անաջողության ու լքման յերկար տաղուուկ, սև տարիները:

Հեղափոխությունից անջատվեցին շատերը, վորոնք մասսաներից կտրվելով տրվեցին գրական սալոնների, ուր իրենց հոգեկան դատարկությունը լցնում եյին գեղարվեստական գրականության մեջ գուրս բերած «գրական ու բացասական տիպերի» ուսումնասիրությամբ: Հեղափոխության թափի հետ ընկել եր և գրականությունը: Արցիբաշեները և Սոլոգուրներն եյին թագավորում ամեն տեղ՝ սեռական հարաբերությունների պրօբեմների լուսաբանությամբ: Մասսայական հրապարակները, հեղափոխական ազգու ճառերը փոխվել եյին փոքրիկ սենյակների, ուր, ինչպես ասացինք՝ յերեմն միայն զբաղվում եյին քաղաքական հարցերով, այն ել «արժեքների վերագնահատությամբ»: «Արժեքները» հեղափոխական վառ որերն եյին, իսկ վերագնահատողները հեղափոխությունից հեռացած, նրա վերելքին չնավատացող տարրերը — ինտելիգենտական խավերից: Յեվ այդ թվական-

Ներին իրոք վոր հերոսություն եր վառ պահել
հեղափոխության գործը, անշեջ պահել շարժման
թափը: Բագուն մանավանդ ուժեղ ցնցումներ եր
կրել հայ-թուրքական ընդհարումներից: Նրա ցեն-
զավոր ինտելիգենցիան, մասնավորապես այն
շրջանը, ուր ապրում եր Բոգդանը, իր մեշշանական
մթնոլորտով կարող եր ազդել յեվ ազդեց անլեզար,
ուրիշի անցագրով ապրող, լրված, հոգնած Բոգ-
դանի վրա: Այդ տարիներում շատ քչերը մնացին
հեղափոխության հետ, շատ քչերը զիմացան հե-
ղափոխության կրած անաջողություններին և շատ
քչերը հավատարիմ մնացին բանվորական դա-
տին: Այդ սպակավաթիվ անձանց թվումն եյին
Ստ. Շահումյանը և Սուրեն Մպանդարյանը, վո-
րոնք ամենաաննախանձ պայմաններում անսպամ
շարունակում եյին գործել և վորոնք իրավամբ
համարվում են ուեակցիայի շրջանի մեր կուսակ-
ցության շինարարները: Բոգդանը նրանց հետ
չեր: Նա սպառվել եր, քամվել, հոգնել:
Այդ հոգնածությամբ և միմիայն զրանով ենք
բացատրում նախկին հեղափոխական վարվուն
բոլշեվիկն պատող ապատիան, վոր այնքան ձե-
ռնուու եր նույն հոգնածությունն ապրող իր շըր-
ջապատզներին: Բոգդանը մեկուսանալով, ընկ-
նում ե մի միջավայր, վորը հեղափոխությունից
հիասթափված՝ նույնպես զբաղվում ե զրական-
սալոնական մարզանքներով: Ճիշտ ե, Բոգդանը,
իին բոլշեվիկը բոլորովին չի արփում ու չի տար-
փում «սալոնիզմով», բայց բուրժուական ինտելի-
գենցիան վորոշ ազդեցություն թողնում ե նրա



Բոգդան Կենունյանը
աքսորում Սիբիր:

վրա, և նա ել հակվում ե դեպի «արժեքների վերագնահատումը»:

Նա հաճախ գանգատվում եր, թե իրեն «ուրացող» են անվանում, և դժգոհում եր իր այդ ընկերներից: Լքման պերիոդում նա մի տեսակ տատանվող մարդ եր դարձել և այդ տատանմանը պիտի վերագրել նրա գրած այն յերեք հոդվածները, ուր Բողդանը հակվում ե լիկիդատորության և յերես դարձնում իր յերեկվա սկզբունքներից. լքման պերիոդի հարկն ե, վոր տալիս ե Բողդանը իր ժամանակին:

Իսչ ել վոր լինի, Բողդանը յեղել ե հեղափոխության առաջին պերիոդի լավագույն գործիչը, նրա հերոսական մարտիկներից ամենախիզախ ու ամենահանդուգն դեմքը:

Մատադ սերունդը թող իմանա, վոր հեռու, մոայլ անցյալում պըոլետարիատը և նրա հայկական սեկտորը հեղափոխությանը տվել են անմոռաց և անձնուրաց դեմքեր: Բողդան Կսունյանը, վորի հիշտակը անշեջ ե իր ընկերների սրտում, նույնպես և անշեջ ե լինելու մատադ սերնդի համար, իբր անցյալի հեղափոխական հուշարձան:

Ավելորդ չենք համարում մի քանի խոսք ել նվիրել Բ. Կսունյանի գրական աշխատանքներին, վորոնց հրատարակումն իբրև առանձին հիշտակ — անհրաժեշտություն ե: Բողդան Կսունյանը հեղափոխական անդուլ աշխատանքի միջոցին

ռուսերեն մի քանի բրոյառներ ե գրել Բ. Ռադին կեղծանվան տակ և լույս ընծայել «Մոլոտ»-ի հրատարակությամբ: Այսուհետև գրել ե մի գրքույկ «Բանվորական Պատգամավորների Առաջին Խորհուրդը» և մի շարք հոդվածներ զանազան թերթերում ու ամսագրերում: Կրկնում ենք, պետք ե հավաքել բոլորը և հրատարակել:

Բ. ԿՈՒՆՑԱՆԻ ԳՐԱՎՈՐ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Какое избирательное право нужно рабочему классу?
2. Политическая партии и формы государственного строя.
3. Государственное устройство во Франции.
4. Первый Совет Рабочих Депутатов.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Ա.ՍՍՈ.Գ.ՐԵՐՈՒՄ

- Три месяца ссылки и побега— 1907, № 9.
Неославянская ложь— „Гудок“ № 42, 1908.
Как быть?— „Бак. Проф. Вестн.“ № 3 и 4, 1909.
Один из итогов— „Наша Заря“ № 5, 1911.
Старое и новое.— „Наша Заря“ № 6, 1911.
Борьба за 8 ч. рабочий день.
История Совета Рабоч. Депутатов.
-

ԴԱՏ ԴԱՏԻ ԴԵՄ

1904 թվի փետրվարի 15-ին ձերբակալված
Բոգդան Միքայաղանովիչ Կնունյանի գործը: Մե-
ղաղը վում ե ըստ 129 հոդվածի 126-րդ կետի
2-րդ մասի Ռ. Ս. Դ. Բ. Կ. Մուկվայի կոմիտեյին
մասնակցելու մեջ: Գործը քննվում ե Մուկվայի
դատարանական պալատում 1905 թվի մարտի
30-ին:

Նիստի սկզբից յերկար բանավեճ ե տեղի
ունենում Կնունյանի ու նախագահի միջև. դա-
տարանի կազմի մտնելու միջոցին Կնունյանը
տեղից վեր չի կենում և նախագահի հարցին,
թե ի՞նքն ե Կնունյանը, պատասխանում ենստած:
Նախագահը նկատում ե, թե իր իրավունքով
կարող ե ստիպել նրան բռնի կերպով հպատակ-
վել որենքի պահանջներին, իրավունք ունի
մեղադրյալին դատարանի դահլիճից դուրս անել
և այլն: Կնունյանը պատասխանում ե, վոր ուռ-
սական որենքներին հպատակվելու մտադիր չե,
վոր կկանգնի ու կնստի իր ուզած ժամանակը և
վոչինչ դեմ չունի, յեթե իրեն դատարանի դահ-
լիճից դուրս տանեն, քանի վոր դատարան ե
յեկել վոչ իր կամքով, այլ ստիպված: Այնուհե-
տե նա ցույց ե տալիս, վոր ուռսական որենքը,
դատարանը իրավունք չունեն հարգանք պահան-

ջելու դեպի իրենց, քանի վոր շատ քիչ բան ե
արված նրանց միջոցով:

Նախագահ.—Յեթե դուք չեք հարգում
որենքի պահանջը, դոնք քաղաքավարությունից
կանգնեք դատարանի հետ խոսելիս:

Կնունյան.—Չեզ հետ խոսելիս՝ կարող եմ
կանգնել, ի նկատի սունելով ձեր հասակը, բայց
այդ բանը վոչ մի կապ չունի որենքը հարգելու
հետ։ Ինչ վերաբերում ե քաղաքավարության
կանոններին, ասելու յեմ, վոր յուրաքանչյուրը
մեզանից առանձին հայացք ունի նրա մասին,
մեկ ել վոր՝ մենք այսուեղ չենք հավաքվել վո-
րոշելու քաղաքավարական կանոնները։ Յեթե դուք
կարծում եք, վոր ձեր պաշտպանած արդարա-
դատությունը թույլ ե տալիս այդպիսի դատարկ
բանների համար ինձ դատարանից դուրս անել,
ապա վարվեցեք, ինչպես կամենում եք։ Դուք
դրանով կրկին անգամ կապացուցեք, վոր այս
հիմնարկը վոչ թե դատարան ե, այլ պոլիցիա-
կան գնդան։

Անուհետև նախագահը կարդում ե արդարա-
դատության մինիստրի կարգադրությունը դա-
տարանի դռները փակելու մասին, և կնունյանի
այն հարցին, թե կարող ե պալատը այդ կար-
գադրությունը փոխել այս ու այն հոդվածների
հիման վրա, պատասխանում ե բացասաբար։

Այնուհետև կնունյանը հայտարարում ե,
թե քանի վոր դռնփակ դատարանը հասարակական
կարծիքի կոնտրոլին՝ այսինքն հեղափոխականների
ու կառավարության միջև յեղած միակ դատա-

վորին հնարավորություն չի տալիս ներկա
լինելու, ուստի ավելորդ ե համարում դատա-
վարությանը մասնակցելու և նախադգուշացնում
ե նախագահին, վոր վոչ մի հարցի չի պատաս-
խանի, ըստ վորում իրեն ե վերապահում վեր-
ջին խոսքի իրավունքը, իր հեղափոխական պարտ-
օք համարելով ոգտագործել ամեն մի դեպք՝
իր գաղափարները տարածելու համար։

Դատախազը աշխատում ե գիխավորապես
նկարագրել Ռ. Պ. Բ. կուսակցության եյու-
թյունը, ցույց տալով նրա միջազգային բնույթը,
նրա ունեցած կազմը Արևմտյան Յեվրոպայի
սոցիալիստական կուսակցությունների հետ ու
նրա սոցիալիստական նպատակը, վոր մարգսիստ-
ների կարծիքով կարող ե իրականանալ միմի-
այն սոցիալիստական հեղափոխության միջո-
ցով։

Զուտ դատախազորեն նկարագրելով սոցիա-
լիստական հեղափոխությունը, նա ցույց տվեց, վոր
հասարակ լեզվով յեթե թարգմանելու լինենք,
մեր ոռուսական սոցիալ-դեմոկրատիան մի տեսակ
պուգաչովշինա յեւ Այնուհետև նա կանգ ե առ-
նում Արևմտյան Յեվրոպայի սոցիալիստական
կուսակցությունների ու ոռուսական սոցիալ-
դեմոկրատական կազմակերպությունների վրա,
վորը զբաղվում ե վոչ այնքան իր գաղափար-
ների աղիտացիայով, վորքան բանվորներին ու
գյուղացիներին կոչ անելով՝ ըմբոստանալու և
մասսայական բռնություններ գործադրելու։ Նա
յերկար կանգ չի առնում մեղադրանքի իրափա-

բանական կողմի վրա, ասելով, թե հենց ինքը
մեղադրյալի մոտ գտնված թուռցիկի ձեռագիրը,
անկախ այն բանից, թե ում զրածն ե, ցույց ե
տալիս նրա կուսակցության պատկանելը։ Նա
առանձնապես ընդգծեց, թե վոչ վոքի համար
դադանիք չե, վոր գոյություն ունի Ռ. Ս. Դ. Բ.
կուսակցություն իր որգաններով, համագումար-
ներով, ուստի կարիք ել չունի պաշտպանապես
ապացուցելու, վոր Ռ. Ս. Դ. Բ. կուսակցության
Մոսկվայի կոմիտեն վոչ թե ֆիկցիա յե, այլ
իրոք գոյություն ունեցող կազմակերպություն։

Պաշտպանը (յերդվալ հավատարմատար
ֆանուշկինը) պատասխանում ե դատախագին
միայն իրավաբանական տեսակետից, ցույց տա-
լով մեղադրանքի անհիմն լինելը, գործի մեջ
մեղադրյալի՝ կուսակցության Մոսկվայի կոմի-
տեյին պատկանելու ուղղակի ցուցմունքների
բացակայության պատճառով։

Կնունյանի ճառի միջոցին նախագահը ընդ-
հատում ե նրան միմիայն յերկու անգամ և այն
ել դատախագի հասցեյին արտասանած խիստ
խոսքերի առիթով։ Մնացած ժամանակը տալիս
ե լիակատար ազատություն։

Հնունյան.—Պ.պ. դատավորներ, նախ և
առաջ կցանկայի պարզել իմ վերաբերմունքը
դեպի ոռւսական դատարանը և ոռւսական ո-
րենքը, վորովինետև նախագահի հետ ունեցած մեր
յերեկվա բանագեծից դուք կարող եյթ սխալ
յեզրակացության գալ այն մասին, թե ինչ
վերաբերմունք ունի սոցիալ-դեմոկրատիան դեպի

այս ու այն պետական հիմնարկը։ Մենք անար-
խիստներ — անիշխանականներ չենք և մեր՝ ոռւ-
սական դատարանի բացասումը բղխում ե վոչ
թե անարխիստական՝ պետությունը և նրա հիմ-
նարկները բացասելու սկզբունքից, այլ այն
սպեցիֆիկ բնավորությունից, վոր ընդունել ե
մեր դատարանը, չնորհիվ Ռուսաստանում տիրող
վոստիկանական ոեժմիթ։ Ինչպես ձեզ հայտնի
յե, մեր Արևմտյան Յեվրոպայի ընկերները, բոպե
անգամ չմոռանալով, վոր բուրժուական իրավա-
կարգում ինչպես պետությունը, այնպես ել
նրան պաշտպանելու կոչված բոլոր որենքներն
ու հիմնարկները կրում են խիստ ու զտված
դասակարգային բնույթ, — վոչ միայն այնպիսի
վերաբերմունք չունեն դեպի բուրժուական դա-
տարանը, ինչպես մենք, այլ ընդհակառակը, աշխա-
տում են որենքով տված բոլոր իրավունքներն
ոգտագործել իրենց դասակարգային կոփվը առաջ
տանելու և առանձին շահերը պաշտպանելու,
յերբ կարիք ե լինում բուրժուական կա-
ռավարությունից կովի միջոցով ձեռք բերած
իրավունքները պաշտպանելու։

Հենց միայն նրանց քաղաքական գործունեյու-
թյան որինականությունը, լեզվությունը պարզ
ցույց են տալիս, վոր գոյություն ունեցող որենք-
ները յերաշխավորում են պայմանների այն
մինմումը, վորի գոյության միջոցին հնարա-
վոր ե պրոլետարիատի շահերի, նրա ազատա-
գրական կովի համար մղվող կոփվը։ Այլ ե մեզ
մոտ։ Սոցիալ-դեմոկրատիայի դեպի դատարանն

ու որենքներն ունեցած բացասական վերաբեր-
մունքը վնչ մի ինչ-վոր բացառիկ բան է, վնչ ել
նրան հատուկ դրություն։ Ուստ ժողովրդի բո-
լոր գիտակից, ինչպես և այսպես կոչված լու-
սավորված հասարակության տարրերը այդպես
են նայում նրանց։ Մենք ներկա դեպքում ավե-
լի հետեւողական ենք և վոչ մի զիջում չենք
անում, ինչպես յերկշու լիբերալիզմ։ Հիշեցեք,
պ. պ. դատավորներ, մոտերս դատաստանական
ոեփորմի 40-ամյակի առիթով տեղի ունեցած
բանկետները, հիշեցեք այնտեղ հանած բանա-
ձերը, հիշեցեք այն մեծահոգի վերաբերմունքը,
վոր ոուսական հասարակությունը, նույն իսկ
չինովսիկան մի քանի խավեր, ի միջի այլոց և
դատական աշխարհից, դատավետում եյին մեր
դատարանը և մեր որենսդրությունը՝ հիշեցեք,
և այն ժամանակ կապարզվի ձեզ համար, վոր
մեր դատարանը իրավունք չունի հարգանք պա-
հանջելու։

Չե՞ վոր մենք իրոք դատարան չունենք. դատա-
րանի տեղ մենք ունենք վոստիկանական զնդան։
Այստեղ փակ դոների մեջ տեղի ունեցող այս-
պես կոչված դատական քննությունը դրան
ապացույց։ Մենք որենքներ չունենք, կա միայն
վարչական կամայականություն։ Զարմանալու ել
չե։ Վոստիկանական պետության մեջ չի կարող
գոյություն ունենալ անկողմնակալ ու անկախ
դատարան։ Վորպեսզի փաստերով խոսենք, կանգ
առնենք իմ փոքրիկ գործի մի քանի մանրամաս-
նությունների վրա։ Յերեկ պ. նախագահը վոս-

տիկանական վերակացուին յերկու մամնավոր
նամակի առիթով արած հարց ու փորձի ժա-
մանակ, իմ՝ վոստիկանատնից ուղարկած նա-
մակի առիթով, իմիջի այլոց հարցըեց, թե հայ-
տարարվել ե մեղադրյալին, վոր նրա նամակ-
ները բռնվել են, վորպեսզի նյութ ծառայեն
եքսպերտիզայի համար։ Վոչ վոք նրան չպատաս-
խանեց։ Այո, պ. պ. դատավորներ, յես այդ մա-
սին իմացա, բայց պատահաբար, ինն ամիս
հետո, յերբ աչքի եյի անցնում ժանդարմական
վարչության քննության հետեւանքները, իսկ
առաջ յես միանգամայն համոզված եյի, վոր
նամակներս ուղարկված են։ Յեվ այդ բոլորը
արվել ե դատախազության հակողության ներքո։
Փոքրիկ ե փաստը, բայց բնորոշ, այնպես չե։
Վորպեսի ուշագրություն դեպի ուրիշի նամա-
կագրությունը և ձեր արդարադատության ձեռքն
ընկած անձանց իրավունքները։ Կամ թե ահա
մի պետք բնորոշ հանգամանք։ Այստեղ մեղա-
դրյալի նստարանին նստած եմ մենակ յես։
Մինչդեռ վնչ դատախազը իր մեղադրական ճա-
ռում և վոչ ել պահնորդական բաժնից ուղար-
կած վկաները խոսք անգամ չասացին, վոր այս
գործով բռնված են 40-ից ավելի մարդիկ։ Այստեղ
կային բանափորներ, ուսանողներ և այն ինտե-
լիգենտ հասարակություն, վորոնք բանտում
նստել են՝ վորը 6, վորը 8 ամիս, և վորոնք
ազատ են արձակված կասկածների բացակայու-
թյան պատճառով։ Նույն իսկ ժանդարմական
քննությունները, վոր այնքան ել պահանջուտ

չեն մեղադրանքի հիմնավորման հարցերում, չկարողացան նրանց նստեցնել մեղադրյալի աթոռին։ Հարց ե ծագում, ինչի՞ համար են նըստած այն մարդիկ, ինչի՞ համար ե մատնված յերիտասարդ մարդկանց 17—18 տարի կազմող կյանքը բանտում։ Յեվ այդ բոլորը արվում եր ու արվում ե դատախազական իշխանության ներկայությամբ, հենց իրեն դատարանական պալատի թևերի տակ, պալատի, վոր այսոր գարմանում ե, յերբ մենք—հեղափոխականներս արժանի հարգանք չենք տածում դեպի այդ հիմնարկները։ Ի նկատի ունեցեք, պարոններ, վոր հիշածս դեպքը պատահական չեր։ Յերեկ դուք քննում եյք Մեշինսկու և մյուսների գործը։ Մեղադրում եք 4 հոգու, իսկ բանտարկել եք 40 հոգի։ Կամ թե այսոր լսելու յեք կրումբյուզելի գործը, վորի առթիվ ձերբակալված են նույնպես մի քանի տասնյակ մարդ։ Բայց չե վոր դուք ձերբակալում եք բանվոր դասակարգի լավագույն, առաջաղեմ տարրերին, ինտելիգենցիայի ամենաաշխույժ խավերին։ Ու այդ բոլորը արվում ե որենքի հովանավորության տակ, այս ու այն կանոնի, այս ու այն հոդվածի հիման վրա։ Միթե դուք, պ. պ. դատավորներ, կարող եք համարձակվել պահանջելու, վոր յես հարգեմ մեր դատախազության ու մեր որենքի այսպիսի ներկայացուցիչներին։ Ասենք՝ ինքը դատախազն ել առանձին հարգանքով չի վերաբերվում դատարանին։ Ուշադրությամբ կարդրացեք մեղադրական ակտի սկզբնա-

կան տողերը, ուր խոսվում ե պահնորդական բաժնի գործակալության տեղեկությունների հիման վրա իմ «Իսկրա»-ի արտասահմանյան կազմակերպությունների և տեղական կոմիտեյի հետ կապ պահպաննելու մասին։ Այդ անպատճիմանատու պնդումն մատուցված ե դատարանին, և վոչ մի հաստատող փաստ մեջ չի բերված։ Ճիշտ ե, յենթադրվում ե, վոր դատարանը հավատալու յե ամենակարող պահնորդական բաժնին և նրա գործակալներին։ Բայց ասացեք, իրեն հարգող դատարանը կարող եր թույլ տալ այդպիսի անհայտության մոռայլով ծածկված պնդումներ։ Յեվ դատարանը հարգող վորեւ դատախազ կարող ե դատարանի առաջ դուրս գալ, առանց լրացների առատ հայտարարությունները ստուգելու։ Վոչ, պարոնայք դատավորներ, վոչ դատարանն ե իրեն հարգում և վոչ դատախազը դատարանին։ Մեր դատարանը, կրկնում եմ, վոստիկանական զնդան ե, ուր հասարակական կարծիքից դուրս, հեռու, խիստ գաղտնիության ծածկոցի տակ ե նա արյունոտ միջոցներով կռվում տիրող իրավակարգի դեմ պայքարողների հետ։ Ել չեմ խոսում այն հրեշային պատիմների մասին, վորով մեր այսպես կոչված քրեյական որենսգիրքը պատժում ե այսպես կոչված քաղաքական հանցագործությունը։ Տաժանակիր աշխատանքներ, աքսոր, կախաղան, —ահա մեր դատարանների պատասխանը ազատության մարտիկներին։ Յես համոզված եմ, պարոնայք դատավոր-

ներ, վոր շատերը ձեզանից, վորոնց ամսի 20-ը դեռ չի զրկել իրավական հարցեր հասկանալու ընդունակությունից, սարսափով են կարդում մեր նոր որենսգրքի հոդվածները, մեր որենքների, վորոնց վրա կարելի յե ծիծաղել և վորոնց գլուխ կարելի յե և պետք ե կռվել, բայց վորոնց վոչ մի կուլտուրական մարդ հարգել չի կարող:

Անցնեմ այժմ այն «հանցանքներին», վորոնց համար յես նստել եմ մեղադրյալի աթոռին և վորոնց համար դուք հավաքվել եք ինձ դատելու։ Պ. դատախազը իր ճառում խոսելով ինձ մոտ գտնված թուոցիկի մասին՝ վոչ մի խոսք չասաց նրա բովանդակության առիթով, խոսք անդամ շթոցներով, թե ինչի առիթով ե գրված թուոցիկը։ Յերեկի նա ամաչում եր խոստովանել, վոր ինքը պահանջում ե ինձ աքսորել նրա համար, վոր թուոցիկի հեղինակը մերկացնում ե բոնակալ միապետության ռազմական ավանդուրան, միապետության կատարած այդ նոր հանցանքը ժողովրդի հանդեպ։

Բայց ասացեք, պ. պ. դատավորներ, արդյոք բաղդի դառն հեզնանք չեմ, վոր Պորտ-Արտուրի խայտառակ անկումից ու ռուսական նավատորմի խորտակումից հետո, Լյայոյանի սպանդանոցից ու Մուկդենի ջարդից հետո, մեղադրյալի նստարանին նստեցնեք մի մարդու, վորը դեռ պատերազմի սկզբից խիստ ու վորոշ մերկացը ե պատերազմի կործանարար հետևանքը աշխատավոր մասսաների համար, մատնաշել ե հայրենիքին հասնող նոր դժբախտության իսկական

հանցավորի վրա ու կոչ ե արել պատերազմելու այս անմիտ պատերազմի դեմ։ Ծուսաստանի սոցիալ-դեմոկրատիան շարունակ կանգնած լինելով պրոլետարիատի շահերի պաշտպանության տեսակետի վրա, այդ շահերի տեսակետից գնահատելով քաղաքական անցքերը, հենց պատերազմի առաջին որերից (հենց դրա մեջ ել պետք ե գտնել նրա մեծ ծառայությունը), յերբ աղգաբնակության մյուս խավերը կամ լուսմ ելին, կամ յերկշոտությամբ «հայրենասիրական» նվիրատվություններ անում, սկսեց ազիտացիա մղել պատերազմի դեմ և պրոլետարիատին կոչ եր անում խաղաղություն, հաշտություն պահանջել։ Կարիք զգացվեց մի տարուց ավելի արյունալի կոիվերի՝ հարյուր հազարավոր մարդկային զոհերով, պահանջվեցին ամբողջ յերկրի քայլայումն ու աղքատացումը, մի շարք խայտառակ պարտություններ, վորպեսզի ազգաբնակության մյուս խավերն ել զիտակցելին պատերազմի կատարյալ հանցագործությունը և միանալին կազմակերպված պրոլետարիատի պահանջներին՝ պատերազմը անհապաղ վերջանելու։

Կարծում եմ, վոր սխալված չեմ լինի, յեթե ասեմ, վոր ազգի բոլոր գիտակից տարրերը, ամբողջ ինտելիգենցիան և ամբողջ մամուլը միաձայն մեղադրում են մեր կառավարությանն այս անմիտ ավանդութայի և բոլոր ապրած ու կրած պարտությունների սարսափների մեջ։ Ի՞նչ դրության մեջ եք, պ. պ. դատավորներ, դուք,

վոր պատրաստվում եք դատելու ինձ այն բանի համար, վորը ամբողջ ժողովրդի պահանջն ե, վորի համար մեղադրյալի նստարանին պետք է նստեցնեք ազգի ամբողջ կուլտուրական տարրերին:

Տարորինակ դրություն ե, այնպես չե՞: Բայց ավելի տարորինակ կթվա ձեր սեփական դրությունը, յեթե դուք մտնեք մեղադրանքի եյության մեջ,

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության մոտակա նպատակներից մեկն ե կովել գոյություն ունեցող քաղաքական ուժիմի դեմ՝ վոստիկանական-բյուրոկրատական միավետությունը իրավական հասարակարգի փոխելու, հասարակարգ, վոր հենված ե հետևողական դեմոկրատիզմ մտցնելու վրա: Անա մեր կուսակցության քաղաքական այդ նըպատակի համար ե, վոր դուք, պ.պ. դատավորներ, առանձին ջանքով ընդգծում եք կոչի վերջին տողերը, վոր վերջանում են «կորչի միավետությունը» խոսքերով: Բայց հիմա ով չի աղաղակում «կորչի միավետությունը»: Կամ արդյոք մի ազնիվ մարդ մեր հայրենիքում, վորը չհասկանար, վոր միայն միավետության վոչնչացումը կարող ե մեր յերկիրը հանել այն փակուղուց, ուր նրան քշել ե բյուրոկրատիզմի գիշատիչ քաղաքականությունը, և վոր միայն այդ միավետության անկումը կարող ե խթան հանդիսանալ յերկրի կուլտուրական զարգացման: Հիշեցեք, թե ինչպես վերջերս բժիշկների բազմա-

մարդ Պիրոգովյան համագումարում միաձայն ընդունվեց մի բանաձև հիմնադիր ժողով հրավիրելու անհրաժեշտության մասին, թե ինչպես նույն իսկ «Մոսկովսկայա Վեդումոստի»-ի հաշվետվության համաձայն՝ ամբողջ դաշլիճը դղրդաց «կորչի միավետությունը» կանչից: Հիշեցեք, թե ինչեր տեղի ունեցան վերջին ամիսներում ամբողջ Ռուսաստանի քաղաքներում, և այն ժամանակ կիսականաք, վոր այժմ՝ ամբողջ Ռուսաստանը միայն մի ցանկություն ունի – շուտափույթ տապալել ժողովրդական որգանիզմից կպած ծծող, բոլորի կողմից ատելի այդ բարբարոսական ուժիմը և փոխարինել այն ազգի ստեղծագործ ույժերին նարարավորություն տվող, նրա պահանջներին համապատասխան նոր քաղաքական ձևերով: Ամբողջ Ռուսաստանը յեռում ե. այսոր չե՝ վաղը, ինչպես նախկին կառավարությունից, այնպես ել դատական վորոշումների աղբից ու դատավճիռներից վոչինչ չի մնալու: Իսկ նրանք, վորոնք այսոր նստած են այստեղ մեղադրյալի նստարանին, նոր, յերիտասարդ Ռուսաստանի գործիչներն են դառնալու: Այսպիսի պայմաններում ինչպես եք կարողանում, պ.պ. դատավորներ, լրջորեն զբաղվել թղթի վորոշումներ կայացնելով: Համաձայնվեցեք, պարոններ, վոր վաղուց ե անցել այն ժամանակը, յերբ կարելի յեր միամտորեն մտորել, թե ժողովրդի միջից անհատներ դուրս կորզելով ու պատեելով կարելի յե կանգնեցնել հեղափոխության ընթացքը:

Հիմա ամբողջ ժողովուրդը հեղափոխական է, և վոչ մի դատարան մինչեւ այժմ չի համարձակվել ժողովրդին դատելու: Այժմ անցնենք դատախազի ճառի այն մասին, ուր նա աշխատում է տալ մեր կուսակցության քաղաքական բնույթագիրը: Նա միանգամայն իրավացի յեր, յերբ մատնանշում եր մեր ծրագրի միջազգային բնույթը և մեր ուսուցիչներ Մարքսից ու Ենգելսից սկզբ առնող մեր տեսական աշխարհայացքը: Նա ճիշտ մատնանշեց և մեր վերջնական նպատակը—սոցիալիզմը և նրա միակ ճանապարհը—սոցիալական հեղափոխությունը, գեղի ուր, մեր խորին համոզումով, տանում ե տնտեսական կյանքի զարգացումը: Մենք համոզված ենք, վոր վոչ թե սոցիալական բարենորդումների, վոչ թե բուրժուական իրավակարգի մասնակի բարելավումների միջոցով կարող ե պրոլետարիատը համնել սոցիալիզմի, այլ այդ իրավակարգի հիմք հանդիսացող մասնավոր սեփականության գեմ մղած անհաշտ կովով և արդյունագործական միջոցների ամբողջ ժողովրդի ձեռքն անցնելով միայն վերջ կտրվի ազգաբնակության վորոշ խավերի ձեռքով մյուս խավերի նկատմամբ գործադրովող շահագործմանը: Դրա անհրաժեշտ պայմանն է պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն պետության քաղաքական իշխանության պրոլետարիատի կողմից նվաճումը:

Բայց սոցիալական հեղափոխության դադարը, հասկանալի պատճառներով, դատախազա-

կան զիտակցության մեջ բեկվել ե բոլոր ֆաբրիկանտների, բանկիրների սպանության կոչով, մասնավոր կալվածքները վոչնչացնելու, ջարդի և այլ ձևերով:

Այստեղ տեղը չե դատախազի հետ ակադեմիական վեճի բոնվելու, միայն խորհուրդ կտայի նրան, յեթե նա հետաքրքրվում է սոցիալ-դեմոկրատական հայացքներով՝ սոցիալական հեղափոխության մասին կարդալ կարլ Կառլ Կառլեցիու հայտնի «Սոցիալական հեղափոխություն» և սոցիալական բարենորդություն» գիրքը: Բայց հետաքրքրի մի բան: Բավական յեղավ պ. դատախազին թողնել միջազգային սոցիալիզմը, անցնել ոռւսական սահմանը, վորպեսզի այլ լեզվով խոսեր: Նրա կարծիքով սոցիալական հեղափոխությունը ոռւսական պայմաններում վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի յերկրորդ պուգաչովշշինա: Այդ աստիճան տգիտություն պատիվ չի բերում ոռւս ինտելիգենտին: Տարերային կյանքի սպեցիֆիկ պայմաններից ծնած շարժումը ոռւսականը ուրժուական հարցի ձևավորված ու խիստ շերտավորված պրոլետարիատի գիտակից շարժման հետ կարող ե խառնել մի մարդ, վորի համար կարեորը արտաքին նմանությունն ե, յերբ թե մեկը և թե մյուսը կրում են մասսայական բնույթ և ուղղված են կառավարության ու իշխանության գեմ, վորպեսզի կարելի լինի հասնել դատախազականի յեղակացությունների: Այդ համեմատության անհեթեթությունը այնքան ակնհայտ ե, վոր նրա վրա յերկար կանգ-

նելու կարիք չկա: Բայց հետաքրքիր ե մյուս
գուգահեռը, վոր անց ե կացնում դատախազը:
Մեր կուսակցության տակտիկան համեմատելով
արևմտյան-յեվրոպական կուսակցական ընկեր-
ների տակտիկայի հետ, գտնում ե, վոր մինչդեռ
վերջինները բանվորական միջավայրում զբաղվում
են սոցիալիզմի գաղափարը ագիտացիայի—պրո-
պոգանդայի միջոցով հասկանալի դարձնել և լե-
գալ քաղաքական կոիվ մղել, ոռուսական սոցի-
ալ-դեմոկրատները ժողովրդին հրավեր են կար-
դում փողոց դուրս գալու, ամեն տեսակ ըմբու-
տությունների դիմելու և դժգոհություններ
արտահայտելու: Միանգամայն չխոսելով ոռուսա-
կան սոցիալ-դեմոկրատների տակտիկական խըն-
դիրների այդպիսի պարզամիտ բացատրության
անմտության դեմ, կուզենայի հիշեցնել այն քաղա-
քական պայմանների տարբերությունը, վո-
րոնց մեջ աշխատում են մենք ու մեր յեվրոպա-
կան ընկերները: Յերևի նա գիտեր, վոր դահ-
լիճի պատերն անգամ կկարմրեյին, յեթե մենք
մի առ մի թվեյինք ցարական ոեժիմի՝ բանվո-
րական շարժման նկատմամբ գործած հանցանք-
ները: Յեվրոպական պրոլետարիատը արդեն
19-րդ դարի առաջին կեսում խիստ ու համառ
կովով նվաճել ե իր դասակարգային կոիվը մղե-
լու ազատության իրավունքը և այսոր, ոգտվե-
լով ձեռք բերած ազատության իրավունքներից,
որինական ձամբով շարունակում ե գնալ դեպի
սոցիալիզմ:

Միանգամայն այլ պայմաններումն ե գտնը-
վում ոռուսական պրոլետարիատը: Նա գեռ չի
ձգել իրենից բռնակալական լուծու և իր ամբողջ
յեռանդը մղում ե այդ ուղղությամբ: Սա մի
անհրաժեշտ պայման ե հետազա կոիվը մղելու
համար: Ակզեռնքային վոչ մի տարբերություն
չկա մեր և յեվրոպական կուսակցությունների
տակտիկական ձևերի միջև և լինել ել չի կարող:
Մենք միայն նույն ազատագրական շարժման
զանազան շրջաններումն ենք գտնվում. մենք ապ-
րում ենք այսոր այն, ինչ վաղուց արդեն ապ-
րել են յեվրոպական բանվորները: Հիշեցեք, պա-
րոնայք դատավորներ, Պետերբուրգի հարյուր հի-
սուն հազար պլոտետարների նորերս կազմակեր-
պած և Գերմանիայի Ռուսի շրջանի յերկու հա-
րյուր հազար բանվորների գործադուլները: Հա-
մեմատեցեք, թե ինչպես անցան այդ գործա-
դուլները մեր և նրանց մոտ, չնայած վոր յեր-
կուները մեր և նրանց մոտ, չնայած վոր յեր-
կուներն ել տնտեսական եյլն: Մինչ-
դեռ Ռուսում գործադուլը խաղաղ անցավ,
առանց զոհերի, Պետերբուրգում պատմական
անհրաժեշտությամբ փոխվեց հսկայական քա-
ղաքական ցույցի, հազարավոր սպանություն-
ների ու վիրավորումների զնով: Լավ մտածե-
ցեք այդ գործադուլների մասին և կհասկանաք
այն կրքոտ ծարավը, վորով բանվոր դասակարգը
ձգտում ե քաղաքական ազատության, կհասկա-
նաք այն ույժը, վոր նրանց մղում ե դեպի այդ
զոհերը: Բռնակալության սահմաններում պրոլե-
տարիատը անկարող ե վարել սոցիալիզմի հա-

մար մղած իր դասակարգային կոիվը: Նա պարզ ցույց ե տվել իր՝ դեպի միապետությունը տածած ատելությունը, և հեռու չե այն ժամը, յերբ յերկրի բոլոր ընդդիմադիր ույժերի դլուխ անցած՝ նա դեն կշպրտի այդ պատմական հնությունը:

Ինչպես միշտ նման դեպքերում լինում ե, պ. դատախազը այս անգամ ել իր ճառում չկարողացավ չակնարկել և իմ ազգությունը: Ե՞ն, յերեփ այդպես ե դատախազական տակտիկան: Արդյոք հայտնի յե պ. դատախազին այն մասին, վոր մեզ—սոցիալ-դեմոկրատներիս համար ազգային խտրությունը վոչ մի գեր չի խաղում, վոր մենք մեր ձգտումներում յելնում ենք վոչ թե այս ու այն ազգային սկզբունքներից, այլ ամբողջ աշխարհի պրոլետարիատի ճիշտ ըմբռնած դասակարգային շահերից: Ինձ մոտ դուած թուցիկում կա մի ցուցմունք, թե ինչպես վերաբերվեցին պատերազմին մեր յապոնական ընկերները: Արդյոք այդ ցուցմունքը լավագույն ապացույցը չե այն բանի, վոր քաղաքական անցքերը արժեքավորելիս՝ սոցիալիստի ազգային ծագումը վոչ մի ազգեցություն չունի. թե ինչ եր ուզում դրանով ասել պ. դատախազը, չգիտեմ: Համենայն դեպս փոքրիշատե սոցիալիստական գրականության հետ ծանոթ մարդը շոշափելու չեր այդ հարցը: Յես վերջացնում եմ: Ի վերջո, պ. պ. դատավորներ, չեմ կարող չմատնանշել այն անհեթեթությունը, վորին դուք դիմում եք:

Դուք ուզում եք դատել մի հեղափոխականի այն միջոցին, յերբ դուրսը հեղափոխություն ե. դուք ուզում եք պաշտպանել մի իրավակարգ, վորին պատմությունը դատապարտել ե կորսայան: Դատեցեք, պարզնայք դատավորներ, իսկ մեզ ձեզ հետ կդատի հեղափոխությունը»:

Յեթե դուք չհամաձայնվեք մեր առաջարկին, նշանակում եք գնում եք ժողովրդի դեմ, իսկ այն ժամանակ ձեզ չի կարող պաշտպանել և վոչ մի փոստիկանություն, վոչ մի դորք: Միապետությունը, վոր անկարող յեղավ իրեն փրկելու, անկարող կինի փրկել ձեզ ժողովրդական ցասումից: Գործադուլը՝ ինչ ել վոր լինի՝ պետք եք գառնա ընդհանուր, ուստի բանվորական խորհուրդը վորոշել եք պահանջել ձեղանից անհապաղ փակել բոլոր արևարա-արդյունաբերական տները: Յեթե դուք չկատարեք այդ պահանջը, ձեր խանութները կջարդվեն, ձեր մեքենաները կվոչնչանան:

Ուրեմն փակեցեք ձեր գործարանները, խանութները: Փակեցեք անհապաղ: Փակեցեք, քանի ուշ չեք, քանի զոհ չեք դարձել ժողովրդական ցասումից:

Ամբողջ Ռուսաստանում գործադուլ եք: Բանթող են յեղել իրավաբանները, բժիշկները, աստիճանավորները, բանկի ծառայողները, զիմնազիստները: Ամբողջ Ռուսաստանում գործադուլ եք: Նրանք դադարել են աշխատելուց, իբր բողոք միավետության, բյուրոկրատիայի ստրկության դեմ, այն բոլոր ապիկարության դեմ, վորոնց վրայով ցարը և պատասկանների վոհմակը պահում եր ուստի ժողովրդին: Հասել եք հատուցման ժամը: Ժողովրդը ազատագրվում եք դարավոր լծից: Տերեք: Միապետությունը ձեզ վրա ել եք հաճախ իր ծանր թաթը դրած անցել: Չեզ կողոպտում եր փոստիկանությունը, քայլքայում եր անարդար դատաստանը, մաշկահան եյին անում չինովակիները: Տերեք: Յեթե ուզում եք լավ կյանք, յեթե ուզում եք ստրկությունից ազատվել, մարդ դառնալ ու քաղաքացի, պետք եք միանաք համառուսական ընդհանուր գործադուլին: Ավելի լավ եք քիչ ել նեղություն քաշել, քան ձեր կյանքի ամբողջ ընթացքում տանել մնշում ու ստորացում: Աջակցեցեք ժողովրդի ազատության և յերջանկության մարտիկներին, միացեք նրանց հետ, փակեցեք ձեր գործարաններն ու խանութները, ինչպես և առևտրական-արդյունաբերական տները:

Մուսական ցարի միապետությունը սահման-
ջեց բանվոր դասակարգի հզոր գրոհի առաջից:
Բանվոր դասակարգը իր քրտինքով, իր արյու-
նով, իր կանանց ու յերեխաներին սովոր մատնե-
լով, նվաճեց ամբողջ ոռուս ժողովրդի համար
առաջին հաղթանակը ցարի ու նրա համարդ աս-
տիճանափորների, վաստիկանության, զորքի ձընշ-
ման դեմ: Քաղաքական այն պահանջները, վոր
մոտ ժամանակներում բացարձակ ներկայացնում
եր միայն ոռուս սոց.-դեմոկրատական բանվորա-
կան կուսակցությունը, հիմա դարձել են ամբողջ
ոռուս ժողովրդի պահանջներ: Այդ պահանջներն
ամրացնելու համար բանվոր դասակարգը իր ընդ-
հանուր գործադուլով տնային բուրժուական պե-
տության ամբողջ որդանիզմը:

Ցարը անձնատուր յեղափ: «Խառնակու-
թյունը» հանդարտեցնելու համար՝ նա իր մանի-
ֆեստում խոստանում ե «իսկական» քաղաքա-
ցիական ազատություն, դավանանքի, խոսքի, ժո-
ղովների, միությունների ազատություն և անձի
անձեռնմխելիություն:

Նա խոստանում ե չդադարեցնել պետական
դումայի ընտրությունները, պետական դումայի,
վորը ընդհանուր ընտրական իրավունքի հարցը
պետք ե քննի: Ընտրությունները չդադարեցնե-

լով՝ նա խոստանում ե ժողովրդական ներկայա-
ցուցիչներին տալ իսկական իրավունք՝ իր նշա-
նակած աստիճանավորներին գնել դումայի «իս-
կական» կոնտրոլի տակ:

Սրանք են ցարի նոր խոստումները: Նրանք
ըսկի ել չեն բավարարում ժողովրդի եյական
պահանջները: Յեթե հայտարարվում ե դավա-
նանքի, խոսքի, ժողովների և միությունների
ազատություն, ապա ինչո՞ւ մեր հանուն ժողովր-
դի ազատության կովող յեղայրները հեծում են
բանտերում և աքսորներում: Մենք պահանջում
ենք այսպես կոչված քաղաքական և կրօնական
հանցաներների, ինչպես և գործադուլների ու գյու-
ղացիական անկարգության համար աքսորական-
ների ու բանտարկյաների համար անհապաղ
ազատություն:

Յեթե հայտարարված ե անձի անձեռնմխե-
լիություն, ինչո՞ւ Մուսաստանի կեսը ուազմական
կամ ուժեղացրած դրության մեջ ե հայտարար-
ված: Մենք պահանջում ենք անհապաղ վերա-
ցում թե մեկի և թե միյուսի, ուր վոր նրանք
հայտարարված են:

Այնուհետև կարո՞ղ ե արդյոք գոյություն
ունենալ քաքաքական ազատություն այնտեղ,
ուր հարյուր միլիոն գյուղացիություն կիսազատ
դրության մեջ գեգէրող մի դաս ե: Մենք պա-
հանջում ենք դասային արտնությունների վո-
չնացում և գյուղացիության իրավունքների հա-
վասարացում Մուսաստանի մյուս բոլոր քաղա-
քացիների իրավունքներին:

Յարն ասում ե, թե իր բոլոր աստիճանավորները դրվելու են ժողովրդական ներկայացուցիչների կոնտրոլի տակ, յերբ նրանք հավաքվեն: Բայց կարող ե ժողովուրդը թույլ տար, վոր ժողովրդական արյունով շաղախսված ժողովրդական փողերը հոտոտող շինոտիկները շարունակեյին կառավարել՝ հենց թեկուզ ժողովրդական ներկայացուցիչների կոնտրոլի տակ: Մենք պահանջում ենք հասարակական և խիստ դատ ժողովրդի դահճներին, նրա ազատության դահճների դեմ: Յարն ասում ե, թե պետական դումայի ընտրությունները արագացնելու համար պետք ե ընտրությունները տանել այնպես, ինչպես կարգադրած ե, և այնուհետև միայն կարելի յե ընտրական իրավունք տալ նրանց, վորոնք այժմ զրկված են: Բայց ընտրական իրավունքից այսոր զրկված ե ամբողջ պրոլետարիատը, ամբողջ ոռւս ժողովուրդը, բացի մի խումբ արառնյալ հողատերերից ու կապիտալիստներից, թեկուզ նրանք իրենց ազատամիտ են հայտարարում: Կարող ենք մենք նրանց վստահել ոռւսական պետության վերակազմությունը դումայի միջոցով: Դա հավասար ե բանվոր դասակարգի ինքնասպանության. լիբերալ բուրժուազիան, ևս առավել պահպանողականները, սոցիալիստի դրոշակից վախենալով, անխուսափելիորեն դաշն կկապեն կառավարության հետ՝ պրոլետարիատին ձնշելու: Այդ սովորեցնում ե պատմությունը, և մենք լավ ենք հիշում նրա դասերը: Ուստի մենք պահանջում ենք անհապաղ հայտարարել ընդհանուր,

հավասար, գաղտնի և անմիջական ընտրական իրավունք հիմնադիր ժողով նրավիրելու համար: Մենք կկովենք մեր այդ մշտակա պահանջներին համանելու համար, հենվելով մեր հաղթանակին, հենվելով քաղաքական ազատության նվաճած հատվածին: Հաղթանակը մեզ չի թրմըցնի, չի ստիպի զենքերը զնել. նա միայն նոր ույժեր և միջոցներ կտա՝ նվաճելու գեմոկրատական հանրապետություն, իսկական ժողովրդապետություն, վորը կատեղծի անհրաժեշտ պայմաններ մեր վերջնական հաղթանակի, սոցիալիզմի համար: Հենվելով ձեռք բերած նվաճումներին, մենք այժմյանից պետք ե ազատ, բացարձակ հավաքվենք, խոսենք ու զրենք մեր զործերի մասին: Պետք ե միություններ կազմակերպենք, որոնք պետք ե հարեն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության:

Միայն այդ կուսակցությունն ե, վոր պրոլետարիատի շահերի պաշտպանն ե վնչ միայն Ռուսաստանում, այլ և ամբողջ աշխարհում. միայն նա յե, վոր համարձակ ու շիտակ պրոլետարիատին ցույց ե տախի ժամանակակից դրությունից գուրս գալու յելքը՝ սոցիալիզմի ուղին: Միացած մի ուժեղ կազմակերպության մեջ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության զրոշի տակ. Ռուսաստանի պրոլետարիատը ձեռք կբերի այն անհրաժեշտ քաղաքական ազատությունը, վորը նրան հնարավորություն կտա միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեծ բանակին միացած՝ համարել սոցիալիզ-

մին, այսինքն բոլոր արտադրության տեսակները աշխատավոր ժողովրդին հանձնելուն:

Բայց ինչ յերաշխիք ունենք, վոր ցարի մանիքեստի խոստումները իրապես կատարվելու յեն, վոր ցարական ոպրիչինան չի ոգտվի բոպեական թուլությունից կամ բանվոր դասակարգի հանգստացումից և հետ չի խլի՝ այնպիսի աշխատանքով, արյան ու զոհերի այնպիսի քանակով ձեռք բերած իրավունքները։ Մենք անհապաղ պահանջելու յենք հետ կանչել քաղաքների և գյուղերի փողոցներում ցրված զորքը, պահանջելու ենք, որ նրան ազատեն խայտառակ պոլիցիական ծառայությունից։ Պետք ե պահանջենք, վոր վոստիկանություն տրվի քաղաքային դումաների տրամադրության տակ, բայց ամենից առաջ պահանջելու յենք ժողովրդական միլիցիա կազմակերպելը՝ ժողովրդի ազատությունը պաշտպանելու համար։ Այժմ մենք կարող ենք տոնել մեր մասնակի հաղթանակը, բայց մենք չենք կարող զենքերը ցած դնել, մինչև չառնենք վերջնական ու գլխավոր հաղթանակը։ Ընդհանուր գործադրությունը հզոր և ուժեղ զենքը մեր ձեռքին ե և յեթե ժամանակավորապես ընդհատենք ել, ապա այնուհետեւ ավելի մեծ ուժով, ավելի ուժգին թափով հարփածելու ենք թշնամուն և համաշխարհային զինված ապստամ բության հզոր բոլոր կումով չնշելու ենք բռնակարության վերջին հետքերը, բանվորության և գյուղացիության ստրկության վերջին շղթաները։

IV

1905 թվի նոյեմբերի 1-ի բանվորական պատգամավորական խորհրդի արտակարգ նիստում կեհաստանի ներկայացուցիչները խոսում են կեհաստանում տեղի ունեցած քաղաքական գործադրությի և այդ գործադրությի նկատմամբ ցարական կառավարության բռնած դիրքի մասին։ Այդ ճառին պատասխանում ե խորհրդի կողմից Բոգդան Գնունյանը հետևյալ խոսքերով։

Ընկերներ, կարծում եմ, վոր արտահայտած կինեմ մեզ բոլորիս ընդհանուր մի միտք, յեթե ասեմ, վոր լեհական ու ոռւսական պրոլետարիատի կոիվը մի հանրական կոիվ ե՝ «ալրությաներ բոլոր յերկրների, միացե՛ք» դեվիզի տակ։ Այն գործը, վորի համար կովում ե լեհական պրոլետարիատը, մեր գործն ե, այն գործը, վորի համար կոիվ ենք մղում մենք, նրանց գործն ե, ուստի և միշտ պատրաստ ենք ձեռք մեկնելու իրար՝ ընդհանուր կովի համար։

Բոլորս ել լավ գիտենք, թե ինչ նշանակություն ունեն ցարական խոստումները և նրանց արժեքը, ուստի այդ խոստումները հաշվի չենք առնում։ Պրոլետարիատը գիտե, վոր միայն միապետությունը տապալելով ու նրա ավերակների վրա գեմոկրատական հանրապետություն կառուցելով կարող ե ազատ ապրել ու զարգանալ։

Ոռուսական պրոլետարիատը ընդունում է յուրաքանչյուր ազգի ինքնորոշումը և միշտ ել կկռվի ամեն տեսակի ու ձեմ կեղեքման դեմ: Յեթե լեհացիները նեղվում են մեր կառավարության ազգային ձգտումներից, ապա լեհական պրոլետարիատի՝ կառավարության դեմ մղած կռվում նրան միշտ կաջակցի ոռուսական պրոլետարիատը: Նա գիտե, վոր այն սեպարատիստական, անջատողական պահանջները, վոր ներկայացնում են լեհական մի քանի խմբակցություններ, լեհական պրոլետարիատի պահանջները չեն: Լեհական պրոլետարիատի խնդիրները հոմանիշ են մերին, և մեր կոփիզը կարող ե լինել միայն ընդհանուր կոփի: Յարական կառավարությունը այսոր ուղղմական դրություն ե հայտարարել լեհական թագավորության մեջ, վաղը հայտարարի ուժեղացրած դրություն Զերնիգովի, Սամարայի և այլ նահանգներում: Նա միատեսակ ճնշում է և ոռուս, և լեհ ժողովուրդներին, ուսախ ոռուս և լեհ պրոլետարիատը պետք է ձեռք-ձեռքի տան, վորպեսզի վերջնականապես դորեն ատելի միապետությունը՝ բոլոր ցարերին ու նրանց համախոհներին:



Ակց. ընկ. «ԶԱԿԿՆԻԴԱ»

Թիֆլիս, — Կոմիտասերնի փող. № 5.

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Արմանский вопрос на Лозанской конференции	50 к
Գ. Ղարաջյան (Արկոմեդ), «Հայ հեղափոխական առաջին խմբակն Անդրկովկասում	60 կ.
Արամ. Յերզնկյան. — Աշխատավորության գատաւունին	65 կ
Օ. Կաշանուն. — Ճաշնակցւոն больше нечего делать	65 к.
Ա. Մասնիկян. — Армянские политические партии за рубежом	50 к.
Ա. Կարինյան. — Դաշնակցականների մասին	60 կ.
Ն. Բուխարին. — Զինական հեղափոխության պրոբլեմները	50 կ.

ԳԻՒԾ՝ 45 կ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0184282

